ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8»*

ք. Ալավերդի «06» օգոստոսի 2021թ.

«_Ալավերդու համայնքապետարանը_», ի դեմս համայնքապետա Սասուն Խեչումյան -ի, որը գործում է համայնքապետարանի- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տիրոշին»ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված _ Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռք բերում (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար։

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան։

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ _պայմանագրի կնքման պահից 30 օր։

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2)։

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով։

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար։

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը։

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5,1 Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 29790192 (քսանինը միլիոն յոթ հարյուր իննիսուն հազար մեկ հարյուր իննիսուներկու) ՀՀ դրամ, որից 4965032 (չորս միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար երեսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: ...........................................................................................................

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

---

[31] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների
Նախարարության Գործառնական Վարչություն
հ/հ 900262121222/համ/
հ/հ 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ս.Խեչումյան

--------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*« 06 » օգոստոսի 2021թ. կնքված*
*«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8»* ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների
վերանորոգման աշխատանքների ձեռք բերում

*ԾԱՎԱԼԱԹԵՐԹ--ՆԱԽԱՀԱՇԻՎ*

***Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում / Բաղրամյան 4 /շենք/***

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *Քանդման աշխատանքներ* | | | | |
| 1 | 46--98 | Ալիքավոր ա/ց թիթեղի կազմաքանդում | 100մ$^2$ | 3,50 | 16.477 | 57.67 |
| 2 | 8-24Կ | Ձեղնալուսամուտների ապամոնտաժում | հատ | 2,0 | 2.021 | 4.04 |
| 3 | 8-186Կ | Ջրթափ խողովակների ապամոնտաժում | գծմ | 15,0 | 0.844 | 12.66 |
| 4 | 8-188կ | Ջրհորդանի ապամոնտաժ | 100մ | 0,78 | 20.660 | 16.11 |
| 5 | Շուկա | Արմունկի ապամոնտաժում | հատ | 2,0 | 0.195 | 0.39 |
| 6 | Շուկա | Ձագարի ապամոնտաժում Բ | հատ | 2,0 | 0.213 | 0.43 |
| 7 | 1-968 | Գոյություն ունեցող և առաջացած շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա | մ³ | 6,50 | 0.748 | 4.87 |
| 8 | Գ130-4 | Շին աղբի տեղափոխում մինչև 4կմ | տն | 9,10 | 1.046 | 9.52 |
| | | *Տանիքի կառուցում* | | | | |
| 1 | 12-404 | Տանիքի ծածկի կառուցում գունավոր ցինկ.թիթեղից ԿՊ-25-0,50 | 100մ$^2$ | 3,55 | 560.612 | 1990.17 |
| 2 | Շուկա | ինքնաշաղ ապաթող հեղյուս | հատ | 1420 | 0.047 | 67.31 |
| 3 | 10-70 | Տանիքի նոր փայտե հիմնակմախքի տեղադրում | մ$^3$ | 0,165 | 148.482 | 24.5 |
| 4 | 12-405 | Կավարամածի տեղադրում | մ$^2$ | 4,50 | 0.266 | 1.20 |
| 5 | Շուկա | Կավարամածի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,113 | 115.221 | 13.02 |
| 6 | 12-278 | Ջրհորդանի կառուցում տախտակամածով գունավոր ցինկ, թիթեղից | 100մ | 0,782 | 585.863 | 458.15 |
| 7 | 10-198 | Ջրհորդանի տախտակների տեղադրում 25մմ հաստ. | մ² | 58,65 | 0.82 | 48.11 |
| 8 | Շուկա | Փայտանյութի արժեքը | մ³ | 1,466 | 115.205 | 168.89 |
| 9 | 8-279 | Քիվերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/ | 100մ$^2$ | 0,47 | 77.486 | 36.42 |
| 10 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | մ$^2$ | 47,2 | 3.656 | 172.57 |
| 11 | 10-198 | Պիպի տախտակների տեղադրում 25մմ հաստ. | մ$^2$ | 3,29 | 0.718 | 2.36 |
| 12 | Շուկա | Պիպի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,099 | 115.181 | 11.4 |
| 13 | 10-198 | Քիվի տախտակների տեղադրում 20մմ հաստ. | մ$^2$ | 24,0 | 0.719 | 17.26 |
| 14 | Շուկա | Քիվի փայտանյութի արժեքը | մ³ | 0,48 | 115.208 | 55.3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 8-215-B | Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ | 100մ | 0,90 | 257.596 | 231.84 |
| 6 | 8-227-B | Ձագարների տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120մմ | հատ | 6 | 3.401 | 20.41 |
| 7 | 8-219-B | Արմունկի ապամոնտաժում և նորի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120 մմ | հատ | 6 | 1.801 | 10.80 |
| 8 | 10-201 | Տանիքի փայտե կոնստրուկ-ցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով | $մ^3$ | 10,50 | 5.304 | 55.69 |
| 9 | 10-203 | Կավարամածի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով | $100մ^2$ մշակ | 3,55 | 17.370 | 61.66 |
| 20 | 10-71 | Ձեղնալուսամուտի կառուցում | հատ | 1,0 | 38.119 | 38.12 |
| 21 | շուկա | Փայտե չորսու | $մ^3$ | 0,340 | 115.210 | 39.17 |
| 22 | շուկա | Ձեղնալուսամուտների երեսապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/ | $100մ^2$ | 0,049 | 77.097 | 3.78 |
| 23 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | $մ^2$ | 4,9 | 3.656 | 17.91 |
| 24 | 7-22 | Ձեղնալուսամուտների շերտափեղկի տեղադրում /1հատ/ | մ: | 0.62 | 1.495 | 0.93 |
| 25 | շուկա | Ծխնիներ | հատ | 2 | 0.425 | 0.85 |
| 26 | 14-172 | Փայտե էլեմենտների յուղաներկում | $մ^2$ | 2,28 | 1.415 | 3.23 |
| 27 | 8-279 | Ձեղնալուսամուտների կցումներ գումավոր g/թիթեղով 0,5մմ | $100մ^2$ | 0,0255 | 77.080 | 1.97 |
| 28 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | $մ^2$ | 2,55 | 3.657 | 9.33 |
| 29 | 20-524 | Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա գունավոր g/թիթեղից 0.5մմ | մ: | 5,970 | 5.048 | 30.14 |
| 30 | շուկա | շերտապողպատ-25x4 | գծմ | 13,20 | 0.331 | 4.37 |
| 31 | շուկա | ԴյուբելներΦ6,L60մմ | հտ | 56,0 | 0.075 | 4.19 |
| 32 | 8-282-B | Տանիքի պողպատե պաշտպանիչ մետաղական ճաղաշարի մոնտաժում | 100 գծմ | 0,78 | 11.0 | 8.58 |
| 33 | շուկա | շերտապողպատ-40x3 | մ | 103,0 | 0.573 | 59.06 |
| 34 | շուկա | Ամրան Φ12A240 | տն | 0,211 | 420.942 | 88.82 |
| 35 | 15-614 | Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 անգամ | $100մ^2$ | 0,172 | 94.014 | 16.17 |
| | | Փայտե աստիճաններ | | | | |
| 36 | 10--28 | Փայտե կարկասի կառուցում | մ3 | 0,106 | 153.274 | 16.25 |
| 37 | 11-186 | Աստիճանի կառուցում տախտակից 29մմ հաստ. | 100մ2 | 0,023 | 489.112 | 11.25 |
| | | | | | | |
| | | *Ընդամենը* | | | | *3906.84* |
| | | *ԱԱՀ* | 20% | | | *781.368* |
| | | *Ընդամենը* | | | | *4688.208* |

«ՏՐԻՈՇԻՆ» «TRIOSHIN» «ТРИОШИН» 06945645

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ--ՆԱԽԱՀԱՇԻՎ

***Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում /Էնգելսի 6 շենք/***

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | ***Քանդման աշխատանքներ*** | | | | |
| 1 | 46--98 | Ալիքավոր ա/ց թիթեղի կազմաքանդում | 100մ$^2$ | 7,03 | 16.479 | 115.85 |
| | 46--98 | Ժանգոտված պրոֆի-լավոր թիթեղի ապամոնտաժում և հանձնում պատվիրատուին | 100մ$^2$ | 0,52 | 16.473 | 8.57 |
| 2 | 8-24Վ | Ձեղնա լուսամուտների ապամոնտաժում | հատ | 3,0 | 2.024 | 6.07 |
| 3 | 8-186Վ | Ջրթափ խողովակների ապամոնտաժում | գծմ | 30,0 | 0.842 | 25.25 |
| | 12-245 | Մետաղական պաշտպանիչ ճաղաշարի ապամոնտաժում և նորից տեղադրում | 100գծմ | 1,4 | 10.734 | 15.03 |
| 4 | 8-188վ | Ջրհորդանի ապամոնտաժում | 100մ | 1,37 | 20.656 | 28.30 |
| 5 | Շուկա | Արմունկի ապամոնտաժում | հատ | 4 | 0.192 | 0.77 |
| 6 | Շուկա | Ձագարի ապամոնտաժում | հատ | 4 | 0.209 | 0.84 |
| 7 | 1-968 | Գոյություն ունեցող և առաջացած շին աղբի բարձում ձեռքով ինքնա-թափ մեքենաների վրա | մ$^3$ | 29,00 | 0.748 | 21.70 |
| 8 | Գ130-4 | Շին աղբի տեղափոխում մինչև 4կմ | տն | 40,60 | 1.047 | 42.49 |
| | | ***Տանիքի կառուցում*** | | | | |
| 1 | 12-404 | Տանիքի ծածկի կա-ռուցում գունավոր ցինկ.թիթեղից ԿՊ-25-0,50 | 100մ$^2$ | 7,58 | 560.671 | 4249.89 |
| 2 | Շուկ132 | ինքնաշաղաաթող հեղյուս | հատ | 3032 | 0.047 | 143.73 |
| 3 | 10-70 | Տանիքի նոր փայտե հիմնակմախքի տեղադրում | մ$^3$ | 0,180 | 148.5 | 26.73 |
| 4 | 12-405 | Կավարամածի տեղադրում | մ$^2$ | 9,00 | 0.267 | 2.40 |
| 5 | Շուկա | Կավարամածի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,225 | 115.206 | 25.92 |
| 6 | 12-278 | Ջրհորդանի կառուցում տախտակամածով գունավոր ցինկ, թիթեղից | 100մ | 1,370 | 585.923 | 802.71 |
| 7 | 10-198 | Ջրհորդանի տախտակների տեղադրում 25մմ հաստ. | մ$^2$ | 102,75 | 0.820 | 84.3 |
| 8 | Շուկա | Փայտանյութի արժեքը | մ$^3$ | 2,650 | 115.210 | 305.31 |
| 9 | 8-279 | Քիվերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/ | 100մ$^2$ | 0,677 | 77.154 | 52.23 |
| 10 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | մ$^2$ | 67,7 | 3.657 | 247.55 |
| 11 | 10-198 | Պիպի տախտակների տեղադրում 25մմ հաստ. | մ$^2$ | 11,76 | 0.720 | 8.46 |
| 12 | Շուկա | Պիպի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,294 | 115.218 | 33.87 |
| 13 | 10-198 | Քիվի տախտակների տեղադրում 20մմ հաստ. | մ$^2$ | 42,00 | 0.720 | 30.25 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | Շուկա | Քիվի փայտանյութի արժեքը | $մ^3$ | 0,840 | 115.212 | 96.78 |
| 15 | 8-215-B | Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Φ120մմ 0,5մմ | 100մ | 1,82 | 257.622 | 468.87 |
| 16 | 8-227-B | Ձագարների տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120մմ | հատ | 13 | 3.402 | 44.22 |
| 17 | 8-219-B | Արմունկի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Φ120 մմ | հատ | 13 | 1.8 | 23.41 |
| 18 | 10-201 | Տանիքի փայտե կոնստրուկ-ցիաների մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով | $մ^3$ | 25,50 | 5.305 | 135.27 |
| 19 | 10-203 | Կավարամածի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթով | $100մ^2$ մշակ. | 7,58 | 17.372 | 131.68 |
| 20 | 10-71 | Ձեղնալուսամուտի կառուցում | հատ | 3 | 38.119 | 114.36 |
| 21 | շուկա | Փայտե չորսու | $մ^3$ | 1,020 | 115.217 | 117.52 |
| 22 | 8-279 | Ձեղնալուսամուտների կցումներ գունավոր g/թիթեղով 0,5մմ | $100մ^2$ | 0,240 | 77.164 | 18.52 |
| 23 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | $մ^2$ | 24,00 | 3.656 | 87.75 |
| 22` | 12-280 | Ձեղնալուսամուտներիերեսապատում ցինկապատգունավորթիթեղով0,5հաստ. | $100մ^2$ | 0,147 | 77.144 | 11.34 |
| 23` | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | $մ^2$ | 14,7 | 3.657 | 53.75 |
| 24 | 20-524 | Գլխանոցների տեղադրում օդափո-խության հորանների վրա գունավոր g/թիթեղից 0.5մմ | $մ^2$ | 20,795 | 5.048 | 104.98 |
| 25 | շուկա | շերտապողպատ-25x4 | գծմ | 36,00 | 0.331 | 11.91 |
| 26 | շուկա | ԴյուբելներΦ6,L60մմ | հատ | 124,0 | 0.075 | 9.27 |
| 27 | 15-614 | Մետաղական ճաղաշարի յուղա-ներկում 2 անգամ | $100մ^2$ | 0,0287 | 93.986 | 2.7 |
| 28 | 15-256 | Օդատարների պատերի սվաղում g/ավազային շաղախով | $100մ^2$ | 0,040 | 131.559 | 5.26 |
| 29 | 6-129 | Օդատար ուղիների վերականգնում B-15 դասի բետոնով | $մ^3$ | 1,70 | 46.248 | 78.26 |
| 30 | 8-215-B | Օդատարների լրացում ցինկապատ թիթեղով 0,5մմ, թիթեղից Φ100մմ 0,5մմ | 100մ | 0,15 | 257.611 | 38.64 |
| 31 | 10--28 | Փայտե կարկասի կառուցում | մ3 | 0,072 | 153.340 | 11.04 |
| 32 | 11-186 | Աստիճանի կառուցում տախտակից 50մմ հաստ | 100մ2 | 0,069 | 489.112 | 33.75 |
| | | *Ընդամենը* | | | | *7877.860* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *1575.572* |
| | | *Ընդամենը* | | | | *9453.432* |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ--ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում / Սանահին Սարահարթ թաղամաս 2/1 շենք/**

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *Քանդման աշխատանքներ* | | | | |
| 1 | 46--98 | Ալիքավոր ա/ց թիթեղի կազմաքանդում | 100մ$^2$ | 8,01 | 16.477 | 131.98 |
| 2 | 8-24Վ | Ձեղնա լուսամուտների ապամոնտաժում | հատ | 4,0 | 2.023 | 8.09 |
| 3 | 8-186Վ | Ջրթափ խողովակների ապամոնտաժում | գծմ | 10,0 | 0.838 | 8.38 |
| 4 | 8-188վ | Ջրհորդանի ապամոնտաժ | 100մ | 1,55 | 2.654 | 32.01 |
| 5 | Շուկա | Արմունկի ապամոնտաժում | հատ | 3 | 0.191 | 0.57 |
| 6 | Շուկա | Ձագարի ապամոնտաժում | հատ | 3 | 0.209 | 0.63 |
| 7 | 1-968 | Գոյություն ունեցող և առաջացած շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենանե-րի վրա | մ$^3$ | 24,00 | 0.748 | 17.96 |
| 8 | Գ130-4 | Շին աղբի տեղափոխում մինչև 4կմ | տն | 33,60 | 1.046 | 35.16 |
| | | *Տանիքի կառուցում* | | | | |
| 1 | 12-404 | Տանիքի ծածկի կա-ռուցում գունավոր ցինկ. թիթեղից ԿՊ-25-0,50 | 100մ$^2$ | 8,30 | 560.605 | 4653.02 |
| 2 | Շուկ132 | Ինքնաշաղաաթող հեղյուս | հատ | 3320 | 0.047 | 157.36 |
| 3 | 10-70 | Տանիքի նոր փայտե հիմնակմախքի տեղադրում | մ$^3$ | 0,869 | 148.487 | 129.04 |
| 4 | 12-405 | Կավարամածի տեղադրում | մ$^2$ | 12,00 | 0.267 | 3.21 |
| 5 | Շուկա | Կավարամածի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,300 | 115.214 | 34.56 |
| 6 | 12-278 | Ջրհորդանի կառուցում տախտակամածով գո-ւնավոր ցինկ, թիթեղից | մ$^3$ | 1,570 | 585.857 | 919.8 |
| 7 | 10-198 | Ջրհորդանի տախ-տակների տեղադրում 25մմ հաստ. | մ$^2$ | 90,75 | 0.82 | 74.45 |
| 8 | Շուկա | Փայտանյութի արժեքը | մ$^3$ | 2,270 | 115.198 | 261.5 |
| 9 | 8-279 | Քիվերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/ | 100մ$^2$ | 0,48 | 76.67 | 36.8 |
| 10 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | մ$^2$ | 47,7 | 3.656 | 174.4 |
| 11 | 10-198 | Պիպի տախտակների տեղադրում 25մմ հաստ. | մ$^2$ | 15,23 | 0.719 | 10.96 |
| 12 | Շուկա | Պիպի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,381 | 115.215 | 43.9 |
| 13 | 10-198 | Քիվի տախտակների տեղադրում 20մմ հաստ. | մ$^2$ | 47,7 | 0.720 | 34.35 |
| 14 | Շուկա | Քիվի փայտանյութի արժեքը | մ$^3$ | 0,95 | 115.196 | 109.44 |
| 15 | 8-215-B | Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից Փ120մմ 0,5մմ | 100մ | 1,50 | 257.593 | 386.39 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 16 | 8-227-B | Ջագարների տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Փ120մմ | հատ | 10 | 3.402 | 34.02 |
| 17 | 8-219-B | Արմունկի տեղադրում գունավոր թիթեղից 0,5մմ Փ120 մմ | հատ | 10 | 1.800 | 18.0 |
| 18 | 10-201 | Տանիքի փայտե կո-նստրուկցիաների մշակում հակահրդե-հային և հականեխման լուծույթով | մ$^3$ | 19,30 | 5.304 | 102.37 |
| 19 | 10-203 | Կավարամածի մշակում հակահրդեհային և հա-կանեխման լուծույթով | 100մ$^2$ մշակ. | 8,30 | 17.370 | 144.17 |
| 20 | 10-71 | Ձեղնալուսամուտի կառուցում | հատ | 4 | 38.115 | 152.46 |
| 21 | շուկա | Փայտե չորսու | մ$^3$ | 1,360 | 115.205 | 156.68 |
| 22 | 12-280 | Ձեղնալուսամուտների երեսապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց | 100մ$^2$ | 0,196 | 77.346 | 15.16 |
| 23 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | մ$^2$ | 19,600 | 3.655 | 71.64 |
| 24 | 7-22 | Ձեղնալուսամուտների շերտափեղկի տե-ղադրում /4հատ/ | 100մ$^2$ | 2,470 | 1.504 | 3.72 |
| 25 | շուկա | Ծխնիներ | մ$^2$ | 8,0 | 0.426 | 3.41 |
| 26 | 14-172 | Փայտե էլեմենտների յուղաներկում | մ$^2$ | 9,10 | 1.418 | 12.9 |
| 27 | 8-279 | Ձեղնալուսամուտների կցումներ գումավոր ց/թիթեղով 0,5մմ | 100մ$^2$ | 0,1019 | 77.156 | 7.86 |
| 28 | շուկա | Ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը | մ$^2$ | 10,19 | 3.656 | 37.25 |
| 29 | 20-524 | Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա գունավոր ց/թիթեղից 0.5մմ | մ$^2$ | 22,700 | 5.048 | 114.59 |
| 30 | շուկա | շերտապողպատ-25x4 | գծմ | 35,00 | 0.331 | 11.58 |
| 31 | շուկա | ԴյուբելներՓ6,L60մմ | հատ | 216,0 | 0.075 | 16.14 |
| 32 | 8-282-B | Տանիքի պողպատե պաշտպանիչ մետա-ղական ճաղաշարի մոնտաժում | 100 գծմ | 1,57 | 10.97 | 17.22 |
| 33 | շուկա | շերտապողպատ-40x3 | մ | 206,0 | 0.573 | 118.11 |
| 34 | շուկա | Ամրան Փ10A240 | տն | 0,291 | 420.931 | 122.49 |
| 35 | 15-614 | Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 անգամ | 100մ$^3$ | 0,343 | 94.024 | 32.25 |
| | | Փայտե աստիճաններ | | | | |
| 36 | 10--28 | Փայտե կարկասի կառուցում | մ$^3$ | 0,424 | 153.274 | 64.99 |
| 37 | 11-186 | Աստիճանի կառուցում տախտակից 29մմ հաստ | 100մ2 | 0,092 | 489.036 | 44.99 |
| | | *Ընդամենը* | | | | *8565.96* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *1713.192* |
| | | *Ընդամենը* | | | | *10279.152* |

# Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ--ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին Սարահարթի թիվ 2/32
բնակելի շենքի տանիքի վերանորոգում

| n/n | հիմնավորում | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Արժեքը հազ,դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Միավոր | Ընդամենը |
| 1 | | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | | |
| 1 | 8-172վ | Գոյություն ունեցող ջրամեկուսիչի քանդում | 100մ$^2$ | 4,11 | 25.997 | 106.85 |
| 2 | 8-170վ | Պարապետի թիթեղի կազմաքանդում | մ$^2$ | 75,00 | 0.211 | 15.84 |
| 3 | 46-119 | Տանիքի գոյություն ունեցող ցեմենտ-ավազային շերտի կազմաքանդում | 100մ$^2$ | 0,00 | 0 | 0 |
| 4 | 12-299 12-300 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 60մմ հաստ. | 100մ$^2$ | 4,11 | 176.038 | 723.52 |
| 5 | 12-288-1 | Խարամի շերտի իրականացում 10սմ հաստությամբ | մ$^3$ | 41,10 | 4.407 | 181.13 |
| 6 | 8-173վ | Հարթ տանիքածածկի կառուցում 1շերտ Իզոգամից | 100մ$^2$ | 4,21 | 287.286 | 1209.47 |
| 7 | 8-174վ | Հարթ տանիքածածկի կառուցում 2շերտ Իզոգամից | 100մ$^2$ | 4,21 | 442.248 | 1861.87 |
| 8 | 8-174վ | Մտոցների և օդատարների կողքերի երեսապատում երկու շերտ իզոգամով 2 շերտ | 100մ$^2$ | 0,038 | 442.247 | 16.81 |
| 9 | 12-280 | Եզրածածկի /պարապետի/ և մտոցների ծածկի /երեսապատում ցին/թիթեղից 0,55մմ հաստ, | 100մ$^2$ | 0,75 | 253.841 | 190.38 |
| 10 | 8-228Կ | Ջագարների փոխարինում D=110մմ /պոլիվինիլքլորիդե | հատ | 2,0 | 2.503 | 5.01 |
| 11 | 8-131Կ | Ջրահեռացման խողովակների փոխարինում Ф110/ պոլիվինիլքլորիդե/ | մ | 26 | 1.611 | 41.89 |
| 12 | 15-256 | Մտոցների պատերի ց/ավազային սվաղում | 100 մ$^2$ | 0,06 | 270.471 | 16.23 |
| 13 | 9-24 | Մտոցների մետաղական դռնակի տեղադրում 1,1*1,1 | հտ | 2,0 | 11.635 | 23.27 |
| 14 | 20-521 | Օդատարների գլխանոցի կառուցում ցինկ, թիթեղից | հտ | 5,00 | 5.34 | 26.7 |
| 15 | Շուկա | Ցինկապատ թիթեղ 0,55մմ | մ$^2$ | 3,630 | 2.644 | 9.6 |
| 16 | 20-521 | Գլխանոցի կառուցում ցինկ, թիթեղից աղբատար խողովակների համար Ф560 | հտ | 2,00 | 5.34 | 10.68 |
| 17 | Շուկա | Ցինկապատ թիթեղ 0,55մմ | մ$^2$ | 0,500 | 2.644 | 1.32 |
| 18 | Շուկա | Շերտապողպատ -25x4 | մ | 10,0 | 0.33 | 3.3 |
| 19 | Շուկա | Դյուբելներ Ф6 ,L-60մմ | հտ | 56,0 | 0.064 | 3.57 |
| 21 | 1-1593 | Շին.աղբի կուտակում բարձում ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,015 | 505.325 | 7.58 |
| 22 | Գ310-5 | Շին.աղբի տեղափոխում մինչև 5 կմ | տն | 21,00 | 0.928 | 19.5 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 4474.500 |
| | | ԱԱՀ | 20% | | | 894.900 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 5369.400 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է –Ալավերդի համայնք- հասցեում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Զորավար Անդրանիկի 8/1 | <<Տրիոշին>> ՍՊԸ |
| Ալավերդու համայնքապետարան | ք. Վանաձոր, Շինարարների 2/25 |
| ՀՀ ֆինանսների Նախարարության | ՀՎՀՀ 06945645 |
| Գործառնական Վարչություն | <<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ |
| h/h 900262121222/համ/ | Հ/Հ 1150018083403404 |
| h/h 900262001085/պետ/ | Տնօրեն Գ. Գրիգորյան |
| ՀՎՀՀ 06954208 | |
| Համայնքի ղեկավար Ա.Խեչումյան | |
| ------------------------------- | ------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| | Կ.Տ. |

*Հավելված թիվ 2*
*« 06 » օգոստոսի 2021թ. կնքված*
*«- ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8-»* ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | Պայմանագրի կնքման պահից | 30օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
h/h 900262121222/համ/
h/h 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

---------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

*Հավելված N 3*
*« 06» օգոստոսի 2021 թ. կնքված*
*«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8»* ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45261124 | «Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման » աշխատանքների կատարման | | 0 | | | 0 | | | 19 000 000 | | | 29790192 | | 29790192 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262121222/համ/
հ/հ 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ա.Խեչումյան

---------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«      »              20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«              » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «              » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ______________________________-ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________<br>ազգանուն, անուն | ____________________<br>ազգանուն, անուն |
| ____________________<br>ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |

Հավելված 5
*« 06 » օգոստոսի 2021 թ. կնքված*
*ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8 ծածկագրով պայմանագրի*

« ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

| N | ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ | Երաշխիքային ժամկետ |
|---|---|---|
| 1 | Տանիքի փայտե կոնստրուկցիաներ | 15տարի |
| 2 | Տանիքի ծածկույթ գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից | 15տարի |
| 3 | Տանիքի գունավոր ցինկապատ թիթեղ | 15 տարի |
| 4 | Ջրահեռացման ցինկապատ խողովակներ Ф120մմ | 10տարի |
| 5 | Ձագար պողպատե ցինկապատ թիթեղից հաստ 0,55 | 10տարի |
| 6 | Գլխանոց պողպատե ցինկապատ թիթեղից հաստ 0,55 | 15տարի |
| 7 | Պողպատե էլեմենտներ | 15 տարի |
| 8 | Պատրապետի ծածկույթ ցինկապատ թիթեղից 0,55մմ | 15 տարի |
| 9 | Ջրամեկուսիչ երկշերտ իզոգամ | 15տարի |
| 10 | Ցեմենտա-ավազային խառնուրդ | 15 տարի |
| 11 | Ձագար պոլիվինիլքլորիդե խողովակից | 15 տարի |
| 12 | Պոլիվինիլքլորիդե խողովակ | 15 տարի |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
h/h 900262121222/համ/
h/h 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ա.Խեչումյան

--------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ. ...........

Հավելված 5.1
*« 06 » օգոստոսի 2021թ. կնքված*
*ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8 ծածկագրով պայմանագրի*

*ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ*

| N | ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ | Երաշխիքային ժամկետ |
|---|---|---|
| 1 | « ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ձեռք բերում | 2 տարի |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
h/h 900262121222/համ/
h/h 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

-----------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 6
«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/8»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

1/ Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինական բնագավառ» հետևյալ ոլորտների՝

| Չափաբաժինների համարները | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|
| *1* | *2* |
| / | «բնակելի,հասարակական և արտադրական» |

1. «Աշխատանքային ռեսուրսներ»

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները - ճարտարագետ-շինարար,թիթեղագործ,ատաղձագործ,բանվոր,վարորդ

Ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր՝ համապատասխանաբար դիպլոմ,անձնագիր,վարորդական իրավունք,համաձայնագիր

2. **«Տեխնիկական միջոցներ»** «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

**Ներկայացնել հիմնավորող փաստաթուղթ**

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները-ինքնաթափ-ավտոմեքենա,ավտոամբարձիչ,վերամբարձ կռունկ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների
Նախարարության Գործառնական Վարչություն
h/h 900262121222/համ/
h/h 900262001085/պետ/
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

---------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Տրիոշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
<<Հայբիզնես բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1150018083403404
Տնօրեն Գ. Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ